ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 30 N 191 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ << ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի N 194-Ն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26 –ի N 32-Ն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի N 1- Ն, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2012 թվականի մարտի 24-ի N 5- Ն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 11-ի N323-Ն և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012 թվականի ապրիլի 4-ի N 1- Ն համատեղ հրամանով հաստատված կարգի պահանջները՝ ***կարգադրում եմ.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում <<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի մարզային փուլն անցկացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Ա.Սիմոնյան

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2017թ. հոկտեմբերի 30 -ի N 191 -Ա

կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ << ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մ.Աբգարյան -- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Ժ. Քոթանջյան – Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչության պետի տեղակալ, Աշտարակի բաժնի պետ

(համաձայնությամբ)

Ա. Ափոյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային ոստիկանության վարչության պետի ծառայության գծով տեղակալ (համաձայնությամբ)

Ա.Թովմասյան -- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ

Վ. Ասատրյան– Հայաստանի Հանրապետության Աշտարակի զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ (համաձայնությամբ)

Դ.Պետրոսյան -- Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ԲՊԲ պետ, վարչության պետի տեղակալ փ/ծ փոխգնդապետ
(համաձայնությամբ)

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ